

Գ Ր Ա Ա Ա Ա Ա Ա

Թ Ե Ս Ա Ղ Ի Ո Յ Շ Ո Ւ Ր Ջ Ը

Մ Ե Տ Ե Ւ Ր Ա Յ Ք

Սուրբ Ստեփանոսի վանքը. նոյեմբեր

Կը գրեմ մերկ ոչ ցուրտ խցիկէ մը, որուն պատերը ծնիդուած են կրով, մէջը կայ արեղայի խեղճ անկողին մը, անտաշ փայտէ ստուիկ մը, և պատին վրայ գունաւոր հին պատկեր մը՝ որ կը ներկայացընէ 1821ի ազգային դիւցազնը՝ Աթանաս սարկաւազը, զինուոր կրօնաւորը, որ թուրքերուն դէմ առիծի մը պէս կռուելէն վերջ՝ գերի բռնուեցաւ և գառնուկի մը պէս շամփուրի վրայ անցուեցաւ Դուբար, խիստ ու պայծառ գիշեր մ'է, բոլորովին շողշողուն աստղներով անհուն երկնակամարի թափանցկութեան մէջ։ Երբզած և երկաւայութեան սաշմաններուն մէջ մտաշածին ճամբորդութիւն մ'ըրած ըլլալու տպաւորութիւնը կը կրեմ իրաս. պէտք եմ բոլորովին ինքն իրենս մէջ ամփոփուիլ՝ նորէն ինքզինքս գտնելու համար այս խրցիկիս մէջ հին մենաստանի մը, որ անհետացած է թիսադիոյ սահմանազուիւր գտնուող երկու հարիւր մետր մթութեանց մէջ ուղղահայեաց խորասուզուող լերկ ժայռի մը զազալքը։

Բայց ո՛չ. մարդկային երեակայութեան ոչ մէկ քմահաճոյց կրնայ ստեղծել այս Մետեորաներուն նման սքանչելիք մը։ Երեակայեցէ՛ք՝ դաշտավայրին վերջին ծայրը, Պինդոսի և Կամբուլիններու մէջտեղ գոցուած անկեան մը մէջ անտառ մը վիթխարի կոտած շինուածքներու, երկու հարիւր մետրէն աւելի բարձր ողորկ ու մերկ որմերով, ումանց կղզիացած հսկա յից աշտարակներուն նման, ումանց իրաբու հետ միացած մտացածին ճարտարա-

պետական խմբերով, ումանց ողորկ զազալներով, ումանց սրածայր ու տարօրինակ գմբեթներով, երբեմն կողմնակի բացուած երկայնաձև քարայրներով՝ որոնց պատուհաններու կը նմանին, և ճեղքուածներով՝ որոնց սանդուխներ կը թուին։ Կատակ մ'է, վիթխարի հրէշային կատակ մը՝ ուսկից բնութեան երեակայութիւնը միայն կրնայ ախորժ զգալ։ Կարծես թէ բնութիւնն ուզած է հոն հրաշայի ու մարդկային կարողութիւնէ վեր տաճար մը կանգնել, գործածելով իւր բովանդակ հիասքանչ ուժերը, երկրաշարժներու պատառուածքները, ամէն տեսակ փոթորիկներու բռնութիւնը, ծովուն վայրագ կատաղութիւնը՝ որ տակաւին կ'ողողէր թիսադիոյ դաշտագետինը, ուր դեռ ո՛չ մէկ եղենափայտ իջած էր Արգունաւորներուն Պելիոնէն. և շատաշաճայն քարընկէջ մեքենաներուն պէս ալիքները դարուց ի դարս զարնուելով ժայռերուն՝ ձեւեր են վեհ որմեր, ճախարակներ են սիւներ, կլորեր են գմբեթներ, հարթեր են զազալներ, սրեր են աշտարակներ, և ահագին տաճարն կամաց կամաց դուրս եկեր է շքեղօրէն... Բայց օր մը, մարկայոյզ Ուրիոնին նման՝ այս օրուան պէս պայծառ գիշերուան մը մէջ անյայտացաւ նա. հինաւուրց մայրն իւր երակներուն մէջ զգաց պէտք մը հանգրստեան, փափագ մը ազնիւ իրերու, ծաղիկներու, խոտերու և հօտերու ու խաղաղեցաւ. և ալիքներն՝ իւր հրապուրուած արշալոյսերու վարդակարմիր անուշութեանէն՝ քաշուեցան դէպ ի Ռուբելը, հոսելով այն ճամբէն՝ որ վերջին յուզման պահուն բացուած էր իրենց առջև Ոսպայի և Ուրմպոսի ու Տեմպէի հովոցներու մէջտեղէն։ Իսկ իրենց նախիրներով միասին զաղթող մարդիկն՝ լեռներէն անցնելով Իշան յանկարծակի ծաղկող երկիր մը և

իրենք զիրենք գտան հրաշալի ամբարտա-
կին առջև, և թերևս ծունը դրին՝ երկըր-
պագեալու, և տարօրինակ ժայռի խորշե-
րուն մէջ աճող թփիկներուն մէջտեղ կա-
ռուցին իրենց առաջին բնակարանները:

Դեռ այսպէս կ'երևար ինձ այս երեկոյ
Մեծէորաներուն խումբը, մինչդեռ զիս
տանող խելացի գրաստիս կը մագլցէր այն
ճամբայէն՝ որ ամէն վայրկեան զլիուս պը-
տոյտ պատճառող զահալէմներուն ըզվէն
անցնելով՝ կը հասնէ Ս. Ստեփանոսի վան-
քը: Ասիկայ մին է այն բազմաթիւ վան-
քերու մնացորդներէն, զորս հազար երկու
հարիւրին ու չորս հարիւրին Բարսեղեան
կրօնաւորներն կառուցած են այս ժայռե-
րու անմատչելի կատարներուն վրայ: Այն
ժամանակ ճամբան լի էր ջարդերով ու
յափշտակութիւններով: Բիւզանդիոնի ու
Սերպիոյ կայսրներն՝ որ կը բնակէին մեր-
ձակայ Տրիքալայի մէջ՝ կը կռուէին իրա-
րու հետ, և լեռներէն մինչև ձորերը ամէն
տեղ կը վխտար աւազակութիւնը: Ասոնք
հոն վերը ապահով ապաստանարան մը
միտոեք ու բնակութիւննին հաստատեք են
հողաբլուրներու և դեռ աւելի բարձր սա-
րահարթ հողակոյտերու վրայ, ուր իրենք
անգամ ուրիշ միջոցով չէին կրնար ելլել՝
բայց եթէ հաստ չուաններով կամ սան-
դուխներով՝ զորս վեր կը քաշէին երբ
հարկն կը պահանջէր: Թէ ինչպէս կրցեր
են հոն վերը ելլել առաջին հիմնադիր-
ներն, այս բանն անըմբռնելի է: Մարդուս
մտքէն կ'անցնի որ երկնքէն իջած ըլլան
անոնք....

Բնաւ մտքէս պիտի չելլէ այս երեւա-
կայական վերելքին յիշատակը: Գլխուս
վրայ շեշտակի կ'երկընային ահագին պա-
րխպներ որ կ'անհետանային վարը ան-
յատակ ճեղքուածներու մէջ, ճամբուն վրայ
սպառնալից կախուած էին ապշեցուցիչ
աշտարակներ՝ որոնք յանկարծ իրարու
մօտենալով կը սեղմուէին, իրարու հետ կը
միանային իբրև անթափանցելի անտառ
մը հիմնալի քարացած կոճղներու, և յե-
տոյ կը բացուէին՝ ցոյց տալով տոգոյն
երկնքի նեղ ծայր մը: Մենք վեր կ'ել-

էինք, միշտ պտոյտներ կ'ընէինք՝ իբրև
տանգէական շրջանակի մը մէջ: Ինքզինքս
պզտրտիկ կը տեսնէի իբրև միջատ մը ձի
հեծած ուրիշ միջատի մը դիմաց, և ինձի
այնպէս մը կ'երևար որ ճամբան ալ վեր-
ջանալիք չունի և պէտք եմ այսպէս շա-
րունակել զայն, վեր ելլել ու շրջիլ ան-
մատչելի բարձրագագաթ ժայռերուն ան-
սահման բոլորտիքը:

Յանկարծ վանք մ'երեցաւ, խա-
ղաղ, մէջտեղը փոքրիկ եկեղեցիով մը, և
չորս կողմը՝ կրօնաւորաց տներով՝ տափ-
կած իրենց ժանգագոյն տանիքներուն ներքե-
քեւ: Ասդին անդին հարիւր մետր տարա-
ծութեան վրայ ուղղահայեաց ժայռ մը,
և արագիւններու բոյն մը սեան մը գագաթը:
Գահալէմին վրայ երկնցած փայտաշէն
պատշգամբ մը կախուած էր մինչև վարը
հաստ չուան մը: Երեսուն մետր աւելի
վարը՝ ժայռին մէկ ծակէն դուրս կ'ելլէր
քակուած շարժական սանդուխ մը, ու կա-
խուած վար կ'իջնէր պարապութեան մի-
ջէն ուրիշ քառասուն մետր խոր ապառա-
ժին մէջ փորուած ճամբու մը վրայ, ուր
գետնէն կը բարձրանար ուրիշ հաստատուն
երկայն սանդուխ մը: Կատարեալ զլխա-
պտոյտի վանքեր: Ուրիշ միջոց չկայ՝ բայց
եթէ մարդ իւր տրամադրութեան ներքե-
սգապարիկ մը և կամ զոյգ մը թեւեր ու-
նենալու է, որպէս զի կարենայ Ս. Երրոր-
դորհան վանքը ելլել: Խօթանասուն մետր
երկայնութեամբ շարժական սանդուխներ
անդունդին վրայ, յետոյ այդ մութ ծակին
վրայէն՝ իբրև ծխնեղոյզի բաժակի մը մի-
ջէն ուրիշ սանդուխներ մինչև վերնադու-
ռը, ուսկից կ'ելլուի վանքին հրապարակը,
և կամ հաստ չուան մը՝ որուն վարի
ծայրը ճանկով մը կապուած է ցանցա-
կերպ չուանէ պարկ մը, որուն մէջ ճամ-
բորդն ծալապատիկ կը նստի, և վերը կե-
ցող կրօնաւորները ճոճչող խոշոր անուորդ
մը դարձնելով՝ դոյլի մը պէս վեր կը քա-
շեն զանիւլայ: Ճամբորդներուն նախամե-
ծար համարած միջոցն այս է: Բայց եր-
բեմն կը պատահի որ ոմանք կէս ճամբան
կը սկսին վախնալ ու ճչել: Առաջնորդս

Դիմիտրիոս ինծի կը պատմէր, թէ ան-
գամ մը մէկը մարեցաւ ցանցին մէջ և
կիսամեռ վեր հանուեցաւ անուորդի տախ-
տակամածին վրայ, և յետոյ չէր ուզեր
վար իջնել: Ընդհակառակն կրօնաւորներն
այնպիսի աշխուժութեամբ մը մը կ'ելլեն
կ'իջնեն այն ճոնչող սանդղիկներէն, որ
նոյն իսկ ջրհանկիրի մը զարմանք պէտք
է ազդէ:

— Բնաւ կտրուած չէ՞ չուանը — կը
հարցնեմ պատուական Դիմիտրիոսին, գե-
ղեցիկ տիպար մը Զորեպանի՝ հազուած
երեքհարիւրի փլորենտացի մը պէս սեւ-
զոյն անթեւ բանկոնակ մը, ծիրանեզոյն
շապիկ մը և սրունքներուն վրայ ճերմակ
ասուեակ մը:

— Ուտէ՛ քօրէ, քիբի՛ — կը պատաս-
խանէ ինձ — բնաւ պարոն:

Այս պատասխանը՝ որ անտարակոյս
գիտ հանգստացնելու նպատակաւ էր՝ տագ-
նապալից է: Վասն զի ամէն չուանը քա-
շելով կը փրթի. եթէ մօտերս փրթած
ըլլար ան, հիմայ պէտք էր նոր ըլլալ, կը
մտածեմ ես պազ անգթութեամբ մը:

Ժայռոտ նեղանցքն՝ ուսկից սողալով վեր
ելանք՝ կը բացուի, ճամբան խիստ դար-
ձուածք մը կ'ընէ, ձին իրրեւ շուարած
կանգ կ'առնու և առջևի սմբակներով կը
սկսի փորձել լպրծուտ գետինը: Վարը կը
նայիմ, կարծես թէ տան մը տանիքին
վրայ կը քալենք: Վրաս քիչ մը տէր Ա-
պոնտիոսի սարսուռը կը զգամ:

— Ի՛ջնալու եմ — կը հարցնեմ խիստ
ժպիտով մը:

— Լնեաւ ա՛ն. Հանգիստ կեցի՛ր — կը
պատասխանէ Դիմիտրիոս երասանակը ձեռ-
քը առնելով՝ և կը պոռայ ձիուն — Իբո՛ւս.
Յառա՛ջ:

Մտրակի հարուած մը, և ահա անցած
ենք: Ս. Ստեփանոսի վանքի՛ն ժայռին դի-
մացը գտնուող բարձրութեան վրայ էինք
արդէն, զոր խոնաւութիւնն իրրեւ գեղեցիկ
կանանց թաւիշով մը զգեստաւորած է ա-
րևմտեան կողմէն: Դահլիճէմերն այլ ևս
վերջացած էին, և աչքն կ'ընդգրկէր այժմ
Մետէորաներու ամբողջ խումբը: Ասդին

անդին բարձրութեանց վրայ կը նշմարուէին
գրեթէ բոլոր վանքերը, ոմանք դեռ աւելի
բարձր դիրքի վրայ, ոմանք վարը փորքիկ
ժայռերու վրայ և ճակատին երկնցուցած
դէպ կ'անդունդներուն եզերքը, խոնարհ
ու անդորրաւէտ կը հանգչէին երեկոյեան
այդ օդային խաղաղութեան մէջ: Հոն վարը
կը տեսնուէր Սյրուհի Ռասսակայի ձգեա-
լանը՝ նրբանցքով մը միացած մերձակայ
զագաթի մը հետ՝ զոր կը պահպանէր ծե-
րունի միայնակեաց մը: Աւելի անդին Ս.
Մեհակապետի՝ բոլորովին երեսի վրայ թու-
ղուած, այնպէս որ սանդուխ մ'անցած
չունի վեր ելլելու, և երթալով կը կոր-
ծանի իւր անմատչելի զագաթին վրայ:
Աւելի բարձր ժայռի մը վրայ կը տես-
նուին Այիու Վարաամի տանիքները և
բոլորածէ գմբէթները. իսկ Փրալիս Լի-
րոսի հարթավայրին վրայ կը տեսնուի ա-
մենէն հինաւորց վանքն Մեծ Մետեորայե՛-
զոր հիմնարկած է Աթմաս վանականն,
և յետոյ մեծցուցած ու ճոխացուցած է
ճգնաւոր բարեպաշտ թագաւորն Յովսափ,
որդի Սերպիոյ թագաւորի մը և եղբայր
Եպիստոսի բռնապետուէլոյ մը: 1600ին
երեսունի չափ կային տակաւին այս սիւ-
նակեացներու հասարակութենէն:

Հիմայ մնացած են միայն վեց վանք և
երկու կամ երեք ճգնարան, որոնցմէ մին
ծովային ծիծեռնակներու բոյներուն պէս
մտած է ժայռի կողին մէջ: Հինգհարիւրին
սկիզբը արդէն նախկին Բարսեղեաններու
ճգնողութիւնը սկսեք էր վտարանդուիլ, և
զանազան մենաստաններու կրօնաւորներն
իրարու հետ կուու մէջ էին՝ վիճաբանելով
իրենց առանձնաշնորհութեանց ու կալուա-
ծոց մասին: Հիմնադիրներու խիստ կաշ-
նոնը կամաց կամաց տեղի տուած էր ծաղ-
կելու բարեկեցիկ և զուարթ արեղայական
կեանքի մը. դաշտավայրը լեցուած էր այ-
գեստաններով...

. . . Տիև տուն, տիև տուն. և ահա
հասած ենք Ս. Ստեփանոսի վանքիև առ-
ջևը: Զանգակիկ մը անուշ անուշ կը հըն-
չէր՝ իրը մեզի բարի գալուստ մարթնելով:
Նրխնելոյզէ մը բարեբաղդութեան ծուխի

բարդ մը թիւ թել կը ցրուէր ցրտաշունչ հովին մէջ՝ որ կու գար Պինդոսէն. վարը հովտին մէջ փնէտն՝ իր արծաթեայ ժապակէները տարածել էր աւազուտ եզերքին երկայնութեամբ. Դաւապաքայի տընակներուն կեղեկապատ տանիքներն կը միանային ահագին քարաժայռին ստորոտը գանուող գետինն հետ:

Վար իջանք Ալթննադի բարեկամի մը հետ՝ գոր գտայ Տրիքալայի մէջ, որ և իբրեւ թարգման և առաջնորդ կը ծառայէ ինձ. վերջալուսին ջորիները վերադարձան գիւղ: Մութ ճեղքուածքի մը վրայ ձգուած երկաթէ կամուրջէ մը վանք մտանք. կարծես թէ արիստոյական զդեակ մը կը մտնէինք շարժական կամուրջէ:

Երրտասարդ, տոգոյն ու տխուր հիւրերնկան՝ որուն երեսն շրջապատուած էր խոշոր և մօրուքով մը և ծոծրակին վրայ ինկած էին հանգուցուած երկայն մազերն, առջևնիս ելաւ և ձեռքերնիս սեղմելով՝ քսաւ մեզի հանդարտ և անուշիկ ծայնով:

— Գարսն օրիստոյի. բարի եկա՞ք:

Հիւրանոցի սենեակներէն մէկուն մէջ, Գէորգ թագաւորի և Ուկա թագուհոյն իւզաների պատկերաց աչքին ներքեւ, յաղթանդամ ու լուակաց վանքի հարազատ ծառայ մը՝ ափսէի մը մէջ մեզի հրամացուց Յունաց աւանդական անուշը, գաւաթիկ մը մուստիլա, յօղում և գաւաթ մը ջուր: Յետոյ փոքրիկ սեղանատան մը մէջ ըրինք ընթերցելիս՝ որ էր րիսաւ և հելլենական անհրաժեշտ խորոված գառնուկը, մինչդեռ անդին եկեղեցիէն կը լսուէին խուլ մրմուռից ծայները կրօնաւորներուն՝ որոնք համախմբուած էին երկոյեան ժամերգութիւննին կատարելու:

Ահա ես կեցած հոս այս մերկ խցիկիս

մէջ՝ որ չեմ գիտեր կրօնաւորական ինչ տարօրինակ հոտ մ՝ ունի փակարանի, ցրտութեան և հուսամի ծաղկանց, միտքս կը բերեմ այն անսոսանալի դաշտանկարը՝ ուսկից վեր ելայ հոս իբրեւ երազի մը անտեղութեանց միջէն. երևակայական ձևերով ժայռերը, մութ գահավէժները, խաղաղ վանքերը ստուերին ներքեւ իրենց հին տանիքներուն՝ որոնք ցցուած են կեղևապատ ումերուն և փայտեայ նիւղանցքներուն վրայ: Եւ տակաւին կը լսեմ անշուշտ խցիկին մէջ հիւրերնկալին ցած ու անուշիկ հնչիւնով խօսելու ծայնը. աչքիս առջև կու գայ անոր տոգոյն և լուրջ դէմքը, որուն վրայ փնացած կ'երևի զեռնոր մոռցուած ցաւի մը ստուերը... Կայ արդեօք երջանկութիւն հոս վերը այս տան մէջ, այս ժայռերուն վրայ, թերեւ ժամանակ մը կար՝ երբ ճամբայ չկար հոն ելլելու: Իսկ հիմա որ երկարէ կամուրջով մը վանքն հաղորդակցութեան մէջ մտած է աշխարհի հետ՝ պէտք է ասկէ փախած ըլլայ ան, ուր այնչափ ուրիշ բաներ մտած են...

Երկրորդ առաւօտը հաւատարիմ Դիմիտրիոսը նորէն պիտի գայ հոս վերը իր անասուններով, և դարձեալ պիտի սկսինք ճամբորդութիւննիս ժայռերու ահագին անտառին միջէն մէկ վանքէն միւս վանքը, մինչև որ հասնինք Մեծ Մեռեորայի վանքը, ուսկից կրկին պիտի մտնեմ ցանցակերպ պարկին մէջ՝ որ ասկէ տասերկու տարի առաջ պատին ունեցաւ վեր քաշելու Արեւելի այս հրաշալիքը այցելող սակաւաթիւ իտալացիներէն ուրիշ մ'ալ. վիկատոր Լամանուէլ Գը:

ԳՈՒԵԼՅՈՑ ՉԻՎԻԼԻՆԻ

Թարգմանեց Յ. Ա. Լ.

